Արձանագրություն N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«16» հոկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**),

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) :

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Նիստից բացակայում էր հանձնաժողովի անդամ Տիգրան Զեյնալյանը՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ :

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/07» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով 2025թ.-ի հոկտեմբերի 16-ին, ժամը 14:30-ին:

1.2 Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը (և նրա առաջարկը Համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի)՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի գործունեության հասցեն
1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	ՀՀ, ք.Երևան, Արամի 3,5

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Գնվելիք ծառայությունների անվանումը	Գնվելիք ծառայությունների՝ գնման հայտով սահմանված գնման գին (ՀՀ դրամ)
1	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	316 000

3. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

3.1 Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

4.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

5. Տվյալներ՝ բացված էլեկտրոնային ծրարում (այսուհետ՝ մասնակցի կողմից ներկայացված հայտ) պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության մասին.

5.1 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած հայտի (հայտում ներառված փաստաթղթերի)՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/07» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (հավելված N 1) և գնային առաջարկը (հավելված N 2) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան և գնահատվում են բավարար (հիմք է ընդունվել 2024թ. հունվարի 10-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 04/26/229-2024 գրությունը, հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված 1.2-ը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Մասնակցի առաջարկած գինն է (հիմք է ընդունվել Համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը).

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը		
		«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ		
		Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	363 000	0	363 000

8. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

8.1 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների՝ գնման հայտով սահմանված գնման գինը:

Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետը, ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.7-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել (հայտարարել) **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ** ընկերությանը:

8.2 Հայտ ներկայացրած այլ մասնակիցներ չկան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է).
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն՝ հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Նորայր Աղամալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/07»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/07» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ **փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունները.**

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել "X"/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրություն**
1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել "X"/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/**
1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	X	363 000*

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/07» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

**«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը ճանաչվել (հայտարարվել է) «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/07» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետը և հիշյալ ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.7-րդ կետը:*

Հեռախոս՝ **010-511-783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am:**

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ:**